«ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»
ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ
2023թ.-ի Հեռակա (էլեկտրոնային) կարգով անցկացված Փայատերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի քվեարկության արդյունքների վերաբերյալ

Հաշվիչ հանձաժողովի նիստ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

ք. Երևան **27/հունիսի/2023թ.**

Ներկա էին հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

Վարդան Դավթյան՝ **Արմավիրի մարզ,**
Ալվարդ Աղախանյան՝ **Արարատի մարզ,**
Վահե Հովհաննիսյան՝ **Արագածոտնի մարզ,**
Սամվել Մաքունց՝ **Սյունիքի մարզ,**
Լևոն Ավետիսյան՝ **Վայոց Ձորի մարզ,**
Ռազմիկ Ալիխանյան՝ **Տավուշի մարզ,**

Մասնակցել է նաև՝
Ներքին աուդիտի պետ Մեսրոբ Ավագյանը:

Նիստն արձանագրեց՝ Մարիամ Գրիգորյանը:

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն Առևտրային Կոոպերատիվի (այսուհետ՝ ՎԿ) 2023թ.-ին հեռակա կարգով անցկացված փայատերերի տարեկան ընդհանուր ժողովին (այսուհետ՝ Ժողով) մասնակցելու և ձայնի իրավունք ունեցող անդամ-փայատերերի քանակը ըստ ցուցակների 10,234 է: Ժողովին մասնակցելու և ձայնի իրավունք ունեցող անդամ-փայատերերի ցուցակը կազմվել է 2023թ.-ի մարտի 31-ի դրությամբ՝ համաձայն ՎԿ դիտորդ խորհրդի որոշման:
Քվեարկությունը տեղի է ունեցել էլեկտրոնային եղանակով՝ ՎԿ քվեարկությունների էլ. հարթակում: Քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող անդամ-փայատերերը ՎԿ քվեարկությունների էլ. հարթակում ավտոմատ համակարգի միջոցով նույնականացվել են և ստացել քվեարկությանը մասնակցելու հնարավորություն: Քվեարկելու իրավունք ունեցող անդամ-փայատերերի մի մասը քվեարկությանը մասնակցել են ՎԿ գրասենյակներում, որտեղ տեղակայված են եղել քվեատուփեր:

Կոտայքի մարզից Ժողովին մասնակցելու և ձայնի իրավունք ունեցող անդամ-փայատերերի քանակը ըստ ցուցակների 810 է, որից Ժողովին մասնակցել են 6.7 %-ը՝ 83 անդամ-փայատերեր:
Կոտայքի մարզում անց է կացվել դիտորդ խորհրդի անդամի ընտրություններ՝ պայմանավորված դիտորդ խորհրդի անդամի պաշտոնավարման ժամկետի ավարտով, ինչպես նաև տվյալ մարզից անվանակարգային և հաշվիչ հանձնաժողովի անդամների ընտրություններ:

Հաշվիչ հանձնաժողովի անդամները ստուգեցին համակարգից արտահանված քվեարկության արդյունքների մասին հաշվետվությունը, բացեցին քվեատուփերը և իրականացրեցին քվեաթերթիկների և յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ձայների հաշվարկը և արձանագրեցին.

Ժողովին մասնակցել են ձայնի իրավունք ունեցող անդամ-փայատերերի 8,09 %-ը՝ 828 անդամ-փայատերեր, որից 750-ը՝ ՎԿ քվեարկությունների էլ. հարթակի միջոցով: Ժողովի քվորումն ապահովվել է:

Հ/Հ	Քվեարկության դրված հարցեր	Քվեարկության արդյունքներ			
		Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Անվավեր
1	Հաստատել 01/04/2022թ.-31/03/2023թ.-ը "Ֆարմ Կրեդիտ Արմենիա" ՈՒՎԿ ԱԿ անդամության համար դիմած 532 անձանց անդամագրությունը	820	1	7	1
2	01/04/2022թ.-31/03/2023թ.-ն ընկած ժամանակահատվածում "Ֆարմ Կրեդիտ Արմենիա" ՈՒՎԿ ԱԿ անդամ-փայատերերի կողմից որպես փայամասնակցություն և անդամավճար վճարված 77,126,000 ՀՀ դրամ գումարն ուղղել "Ֆարմ Կրեդիտ Արմենիա" ՈՒՎԿ ԱԿ կանոնադրական կապիտալի համալրմանը՝ ավելացնելով համապատասխան անդամ-փայատերերի փայամասնակցության չափը "Ֆարմ Կրեդիտ Արմենիա" ՈՒՎԿ ԱԿ կանոնադիր կապիտալում:	806	8	13	1
3	Հաստատել "Ֆարմ Կրեդիտ Արմենիա" ՈՒՎԿ ԱԿ կանոնադրության 2.1 կետի փոփոխությունը:	809	3	16	1
4	Հաստատել "Ֆարմ Կրեդիտ Արմենիա" ՈՒՎԿ ԱԿ փայատերերի ընդհանուր ժողովի գումարման կանոնակարգի փոփոխության նախագծի հաստատում:	808	4	16	1
5	Հաստատել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի թեկնածությունը որպես «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ 2023-2024թթ.-ի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող աուդիտորական ընկերություն	805	2	21	1

1. **Կոտայքի մարզ**

Դիտորդ խորհրդի անդամի ընտրության արդյունքներ

Հ/Հ	Դիտորդ խորհրդի անդամի թեկնածու	Հավաքած ձայների քանակ
1.	Արմեն Ստեփանյան Արշավիրի, ք. Երևան	46

2.	Վաղարշակ Գևորգյան Հրանտի, գ. Գառնի	36
3.	Անվավեր	
4.	Բոլորին Դեմ եմ	1

Անվանակարգային հանձնաժողովի անդամի ընտրության արդյունքներ

Հ/Հ	Անվանակարգային հանձնաժողովի անդամության թեկնածու	Հավաքած ձայների քանակ
1.	Սոս Սարգսյան Վոլոդյայի, գ. Նոր Գեղի	55
2.	Լևոն Հարությունյան Գավրուշի, գ. Նոր Գեղի	28
3.	Բոլորին դեմ	
4.	Անվավեր	

Հաշվիչ հանձնաժողովի անդամի ընտրության արդյունքներ

Հ/Հ	Հաշվիչ հանձնաժողովի անդամության թեկնածու	Հավաքած ձայների քանակ
1.	Հովակիմ Սարիբեկյան Հայկի, գ. Ջրառատ	48
2.	Սուսաննա Գաբրիելյան Բարիսի, գ. Գեղաշեն	35
3.	Բոլորին դեմ	
4.	Անվավեր	

Ամփոփելով Կոտայքի մարզում տեղի ունեցած ընտրությունների արդյունքները, հաշվիչ հանձնաժողովը արձանագրեց, որ

- Դիտորդ խորհրդի անդամի պաշտոնում վերընտրվել է Արմեն Արշավիրի Ստեփանյանը,
- անվանակարգային հանձնաժողովի անդամի պաշտոնում ընտրվել է Սոս Վոլոդյայի Սարգսյանը,
- հաշվիչ հանձնաժողովի անդամի պաշտոնում ընտրվել է Հովակիմ Հայկի Սարիբեկյանը:

Հաշվիչ հանձնաժողովի անդամները ժողովը հայտարարեցին փակված:

Հաշվիչ հանձնաժողով՝

Վարդան Դավթյան ՝
Ալվարդ Աղախանյան ՝
Վահե Հովհաննիսյան՝
Սամվել Մաքունց՝
Լևոն Ավետիսյան՝
Ռազմիկ Ալիխանյան՝